# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ՌԴ ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ՄԱՐԶ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.Անունը, ազգանունը**
Տրդատ Սարգսյան
**2.Զբաղեցրած պաշտոնը**
ՀՀ Վայոց ձորի մարզպետ
3.**Գործուղման վայրը և ժամկետները**
ՌԴ Արխանգելսկի մարզ, 2019թ. մարտի 18-ից 20-ը
4.**Հրավիրող կողմը՝**
Արխանգելսկի նահանգապետ
**5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
Վայոց ձորի և Արխանգելսկի իշխանությունների կողմից ստեղծված <<Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի համագործակցության միություն>> ոչ առևտրային կազմակերպության վերահսկիչ խորհրդի 3-րդ նիստին և Հայաստանի տան բացման պաշտոնական արարողությանը մասնակցելու նպատակով:
6. **Քննարկված թեմաները.**

Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի գործարար կապերի և առևտրաշրջանառության ծավալների ավելացման, զբոսաշրջության և մշակութային կապերի ամրապնդման վերաբերյալ :

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** <<Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի համագործակցության միություն>> ոչ առևտրային կազմակերպության վերահսկիչ խորհրդի 3-րդ նիստում հոգաբարձուների խորհրդի կազմում կատարվեց փոփոխություն՝ ՀՀ Վայոց ձորի նախկին մարզպետի փոխարեն անդամ նշանակվեցի և ելույթում նշեցի , որ ստեղծվել է հիանալի հնարավորություն Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի գործարար կապերի և առևտրաշրջանառության ծավալների ավելացման, զբոսաշրջության և մշակութային կապերի ամրապնման համար: Քննարկվեց 2 մարզերի միջև ապրանաքաշրջանառության զարգացման և հատկապես ապրանքների փոխադրման խնդիրները: Արխանգելսկի նահանգապետը հայտնեց, որ առևտրաշրջանառության ծավալները վերջին հինգ տարիներին մոտ հինգ անգամ երկու մարզերի միջև աճել է: Մասնակցեցի Հայաստանի առևտրի տան պաշտոնական բացմանը, որտեղ ներկայացրել էինք Հայաստանում արտադրված ապրանքներ՝ թարմ ու պահածոյացված մթերքներ, չորամրգեր ու բնական հյութեր, ըմպելիքներ, սոուսներ ու բուրավետ թեյեր:

**8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Արխանգելսկի պատվիրակությունը հրավիրվեց հոկտեմբերին ՀՀ Վայոց ձորի մարզ՝ Արենիի գինու փառատոնին և Երևան՝ Արխանգելսկի տան բացման պաշտոնական արարողությանը մասնակցելու համար: Արդեն ընտրված է շենքը, մշակված է առևտրի տան կառուցվածքը՝ գործնական հանդիպումների համար խորհրդակցությունների սրահով, Արխանգելսկի մարզի, նրա մշակույթի, ավանդույթների վերաբերյալ ցուցադրություններով և հյուսիսային խոհանոցը ներկայացնող ռեստորանով: Արխանգելսկի նահանգապետի առաջարկով հանդիպում կայացավ Արխանգելսկի Մ. Լոմոնոսովի անվան Հյուսիսային (Արկտիկական) դաշնային համալսարանի ղեկավարության հետ: Խոսվեց կրթության և գիտության բնագավառներում համագործակցության, համատեղ ծրագրերի իրագործման, ուսանողների փոխանակման ծրագրերի, վայոց ձորցի ուսանողների և դիմորդների՝ այդ ԲՈՒՀ-ում ուսանելու հնարավորությունների մասին: Արխանգելսկի մարզի ղեկավարը առաջարկեց Հայաստանից Արխանգելսկ սովորելու եկած լավ առաջադիմությումբ ուսանողներին խրախուսելու նպատակով կրթաթոշակ նշանակել: Հանդիպեցինք տուրիստական ընկերությունների հետ: Ներկայացվեց մարզում տուրիզմի զարգացման հնարավորությունները և համագործակցության հնարավոր ձևերը: Նախատեսվել է տուրօպերատորների համար կազմակերպել ինֆորմացիոն շրջագայություն դեպի Հայաստան, իսկ 2019 թվականի աշնանը՝ գործարար շրջանակների ներկայացուցիչների բիզնես այց Հայաստան: Ակտիվ քննարկումներ տեղի ունեցան հայ համայնքի ներկայացուցիչների հետ՝ Մամիկոն Գեկչյանի գլխավորությամբ, որտեղ քննարկվեցին առողջապահության և կրթության ոլորտում համագործակցության վերաբերյալ հարցեր:
Հանդիպումներ տեղի ունեցան Արխանգելսկի քաղաքապետ՝ Իգոր Գոդզիշի հետ: Արխանգելսկի քաղաքապետը հրավիրվեց Ջերմուկ ծանոթանալու քաղաքի տուրիստական հնարավորությունների հետ՝ հետագա փոխշահավետ համագործակցության համար:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով համատեղել ջանքերը, առավել ամրապնդել և ընդլայնել փոխգործակցության շրջանակները:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

**Տրդատ Սարգսյան**
**26.03.20192.**